

պէս հարկաւոր եղած բաներուն պէս փափաքելի են, էական բաներու կարգանցած կը սեպուին . վասն զի ամենայն մարդիկ ՚ի բնէ ունայնասէր են, և բիւր տեսակ բաներու ցանկացող . և աս փափաքներուն հասնելու համար է որ այնչափ տեսակ երկրորդական բաներ հնարած են . և որովհետև աս փափաքներուն շատը օրինաւոր է, ուրեմն օրինաւոր փափաք լեցընող բաներն ալ կրնան բարձր կամ ցած արժէք ունենալ՝ իրենց լուրջած փափաքին համեմատ :

() Գտակարու թեան վրայ երկու խօսքով խորհրդածութիւն մըն ալ ընենք ու հատուածնիս վերջացրենք : Ի՛նչ չնչին կարծուած բաներ կան՝ որոնց օգտակարութենէն բնաւ շահ մը չենք քաղեր . վասն զի կամ ան է որ անոնց օգտակարութիւնը չենք ճանչնար, և կամ չենք ուզեր անանկ փցուն բաներու վրայ աշխատիլ, որով մեծին ալ անհոգ կ'ըլլանք : Աւրոպա ինչով է որ այսչափ հարուստ ու երջանիկ է . վասն զի ինչ և իցէ անօգուտ կարծուած բանի օգտակարութիւն տալ ու անկէջ շահ մը հանել կը նայի . օրինակի համար (որչափ ալ ծիծաղելի կամ արհամարհելի բան երևնայ ոմանց) Աւրոպա սովորութիւն կայ՝ որ բոլոր հասարակաց լուալիքներուն աղբը այլ և այլ մարդիկ տէրութենէ կը գնեն . ու մասնաւոր տեղուանք կը լեցընեն կը չորցընեն, ետքը շահով երկրագործներու կը ծախեն, որ լաւ պարարտութիւն կ'ըլլայ : Աւրոպայի ամէն քաղաքներուն մէջ շատ անձինք կան որ գիշերը լապտերով, կամ առաւօտուան դէմ փողոցները կը պտտին, ու տներու առջև թափած աւուրքներու մէջէն թղթի, ապակիի, ոսկորի, երկրթի կտորուանք կը ժողվեն ու ետքը ուրիշի կը ծախեն . աս բանիս համար Փարիզ մասնաւոր ընկերութի կայ : Վարձեալ կենդանեաց սատակները նետելու տեղը, մասնաւոր սպանդանոցներ կան՝ հոն կը տանին, ու մորթը, սմբակները, ոսկորները, մազը, և ոմանց աղիքն ալ կ'առնեն ու բանի կը բերեն : Ի՛սոնց նման շատ բան կայ,

բայց մենք մեր հատուածին չափէն դուրս չենք ելլեր . այսչափը բաւական կը սեպենք մեր ազգայինքը յորդորելու որ արհամարհոտ չըլլան, հապա աչալուրջ և ամէն բանէ օգուտ հանող :

Հ . Տ . Թ



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Յորենի ցեցերուն դէմ հնարներ :

ՀԱՅԱՍՏԱՆ լրագրոյն 17-70 թուոյն մէջի իմաստուն և դիտող անձին խօսքերէն յորդորուած՝ կը փութանք կատարել առ այժմ ըստ մասին իր խնդիրքը, ու ցորենի ցեցերուն դէմ Աւրոպացւոց տեղ տեղ բանեցուցած պարզ հրնարքներէն մէկ բանին հոս դնել, խոստանալով որ ուրիշ անգամ իր բուն տարակոյսն ալ մեր կողմանէ լուծենք :

Յորենի ցեցը կամ որդը՝ միշտ ցորենին հետ կը մտնէ ցորեննոցը, և ցորենին հետ կ'ելլէ անկէջ . աս ցեցը մանր թիթեղնիկի մը ձգած հաւկիթներովը կը շատնայ, ու թէ որ դէմը չառնուի՝ բոլոր ցորեննոցին ցորենը կամ գարին կ'ուտէ կը հատցընէ, և միայն անոնց կեղևը կամ թեփը կը թողու :

Ի՛ց ցեցը ջնջելու մէկ բանի հնարքները ասոնք են .

Ա . Յորենը կամ ինչ և իցէ արմտիք ցորեննոցը դնելէն առաջ՝ պէտք է աղէկ մը մաքրել ու սրբել ցորեննոցը, այնպէս որ ամենեւին աղտոտութիւն չմնայ :

Բ . Յորենը ինչուան որ լաւ չըջորնայ՝ պէտք չէ ցորեննոցը դնել :

Գ . Ի՛նչ ցորենն որ հունտի համար պիտի պահես, առաջ մոխրաջրէ մը անցուր՝ մոխրաջրին մէջ կիր ալ խառնելով, և ցորեննոցը դնելէն առաջ ան ցորենը լաւ մը չորցուր :

Դ . Թիէ որ պահելու ցորենդ քիչ է,

1 Լտ . Curculio granorius ըստ Լիննէոսի : Իտ . Punteruolo del frumento. Գղ . Calandre du blé կամ Charançon. Տճ . Դախլէ գիւլի, պոռպոյ գիւլի :

ցեցերէն ազատ մնալու համար բաւական է որ ամառը անանկ տեղ մը դնես որ աղէկ հով բանի , ու ան տեղին տաքութիւնը ոչ երբէք աւելի ըլլայ (Ահմարի ջերմաչափովը եօթը կամ ութը աստիճանէն :

Ե . (Թ) Կ որ ցորենդ շատ է , կարելի ըլլայ նէ՝ պէտք է գետնափոր տեղէ մը դէպ ՚ի ցորեննոցին մէջ հողմաբեր կամ օդայոյզ ըսուած գործիքը դնել , ու ասով հովահարել ցորեննոցը :

Զ . Վիտնալու է որ աս ցեցը սովորաբար դիզուած ցորենին երեսէն քանի մը մատնաչափ միայն խորը կը մտնէ . ուստի որչափ որ կարելի է ցորենը բարձր դի գելը շատ օգուտ կ'ընէ . աղէկ հնարք է նաև մեծամեծ գուրերու մէջ լեցրնել , ինչպէս կ'ընեն Հայաստան , և կամ տակառներու մէջ , ու երեսը մէկ կանգնաչափ բարակ աւազով ծածկել . ետքը քանի որ ուզես վրայէն ցորեն հանել՝ հարկաւ երեսի ցորենը մաղէ մը կ'անցընես որ աւազը մաքրուի :

Է . Ստէպ ստէպ պէտք է ցորենը խառնել կամ թիակով մը երնել որ ցեցերը փախչին երթան . աս հնարքով նաև շատ ցեցոտած ցորենը կրնայ մաքրուիլ :

Ը . () գտակար հնարք մըն ալ աս է որ ատեն ատեն ցորենին չորս բոլորը , վրան ու մէջը դնես ծխախոտի կանաչ տերև , կամ կանեփի , թանթրուենիի՝ , եղևինի և անոնց նման ուրիշ խէժոտ բոյսերու ճիւղեր . վասն զի ցեցերը ասոնց հոտէն կը փախչին :

Թ . Ը չորս բուռ սխտոր , նոյնչափ օշինդր կամ ափսինթ՝ , երկու բուռ հասարակ աղ , հինգ լիպրէ Լ՛նգղոյ բորակ . ասոնք երկու դոյլ ջրի մէջ քիչ մը ատեն եփէ , ու ան ջրովը լուա ցորեննոցին յատակը՝ առիքը՝ գերաններն ու պատերը : Արնաս նաև ցորենին վրայ սաստիկ ու կծու հոտ ունեցող ջրեր ցանել . ինչպէս խէժի ջուր , կամ մէկ տեղ եփած սոխի՝ սխտորի՝ լեղի լուբիայի , թանթրուենիի ծաղկի և ասոնց նման խոտերու ջուր :

1 Մի-բեր : 2 Փելի :

Ժ . Վերմանիոյ մէջ աս սովորութիւնը կայ որ աշնան ատեն ցորեննոցին յատակը դառն բակլայ կամ թրմուս՝ ըսուած հնտեղէնը կը ցանեն ու ցորենը անոր վրայ կը լեցընեն . կ'ըսեն թէ աս հնարքով ցորենը ամենեւին ցեցոտիր :

ԺԱ . Ծորենին հետ քիչ մը կիր ալ խառնելը աղէկ է կ'ըսեն . բայց ան ատեն աղալու խրկելէն առաջ աղէկ մը մաղելու է ցորենը :

(Թ) Կ որ ցորենը յարդէն ճճեկեր ըլլալ սկսեր է , աս հնարքներն ալ կրնան բանեցուիլ .

Ա . Վարնան ատեն՝ քանի որ դեռ թիթեղնիկները հաւկիթ չեն ձգած՝ ցորենի դէզին մէջ տեղ տեղ շիշներ թաղէ , այնպէս որ միայն անոնց բերանը ցորենէն դուրս մնայ . թիթեղնիկները կ'երթան անոնց մէջ կը մտնեն , ուստի առ ու թափէ դուրս :

Բ . (Թ) Կ որ թիթեղնիկները դեռ չեն շատցած , կրնաս ցորեննոցին մէջ շատ մը նոր հաւկիթէն ելած վառեկներ կամ հաւու ձագեր ձգել . անոնք որովհետև խիստ կը սիրեն աս ճճիները , շուտ մը կը ջարդեն կը հատցընեն :

Գ . Ը ատ օգտակար է նաև որ և ի պէ գարշահոտ բաներ ծխելը ցորեննոցին մէջ :

Դ . (Թ) Կ որ կարելի ըլլայ ցորեննոցը սաստիկ տաքցընել , այսինքն (Ահմարի ջերմաչափովը ինչուան 50 աստիճան , բոլոր թիթեղնիկներն ու ճճիները կը սաստկին : Բայց աս բանիս վնասն ան է որ տաքին սաստկութենէն ցորենին ծուծը կ'աւրուի ու ցանուի նէ չծրլըր :

Տեսակ մը թիթեղնիկ ալ կայ որ ցորենին հետ չմրտներ ցորեննոցը , հապա գիշերանց՝ ծակէ մը կամ պատուհանէ , ու անանկ կը շատնայ քիչ ատենի մէջ որ բոլոր ցորեններուն ծուծը ուտելով՝ ծակ ծակ կ'ընէ զանոնք՝ :

Լ՛սոնց դէմ ալ աղէկ են վերը յիշուած հնարքները . բայց մէկ քանի ուրիշ հրնարքներ ալ կան . այսինքն

1 Աճէ պփլ : 2 Լտ . OEphora ըստ Լաթրէլի : Իտ . Tignuola del grano . Գղ . Alucite , կամ Pou volant .

Ա. Գորեննոցին պատուհաններուն լաթ կարելու է ու, գոնէ մայիսէն ինչուան օգոստոս անանկ ձգելու է :

Բ. Գորենը հնձուածին պէս ծեծելու է որ ցեցերը ատեն չանենան մէջը հաւկիթ ձգելու :

Գ. Երբոր ցեցերը թիթեղնիկ դառնան, պէտք չէ ցորենը խառնել՝ որ չքրուին թիթեղնիկները . հապա ցանց մը շինելու է՝ դերձանով հիւսած ու կրոր շրջանակի մը վրայ քաշած, ցանցին երեսն ալ ոստղի՝ խէժ կամ ինչ և իցէ կաշուն նիւթ մը քսելու է . իրիկուան դէմ երբոր թիթեղնիկները թռչտիլ կը սկսին՝ աս ցանցը ցորենին երեսը քալցուր, անոնք կուգան վրան կը կաշին. պատերուն վրայ մնացածներն ալ դիւրին է ջարդել առաւօտանց կանուխ :

Ուրիշ տեսակ մը ցեց ալ կայ աս երկու տեսակէն ալ փնասակար, որ սովորաբար դիզուած ցորենին երեսի հատիկները իրարու հետ կը միացնէ, այնպէս որ ցորենը տախտակ տախտակ կ'ըլլայ ու կը խմորի՝ աս անտանելի ցեցերը ջնջելու համար վերի հնարքներէն զատ ասոնք ալ աղէկ են .

Ա. Դիզուած ցորենին երեսի պրնտացած կտորները և անմիջապէս անոնց տակի հատիկները պէտք է վերցնել ու շուտ մը տաք ջրի մէջ ձգել . ետքը աս ցորենները հաւերուն և ուրիշ կենդանեաց կրնան տրուիլ :

Բ. Ընդ որ զործողութենէն ետքը, կամ թէ առանց ասոր ալ, ցորենի դէզը լաւ մը խառնելու տակն ու վրայ ընելու է . ասով ցեցերը կը փախչին ու պատերուն վրայ կը քաշուին . ան ատեն ցորենի դէզին չորս դին կարգ մը աղէկ կաշուն ձիւթ դնելու է . ցեցերը ցորենին վրայ երթալու ատեն ան ձիւթին դպչելուն պէս կը սասկին :

Գ. Կրնայ ըլլալ որ ան ցեցերէն ոմանք պատերուն ու գերաններու ձեղքերուն

մէջ ալ մտած ըլլան . ասոնք ցախ աւելով աղէկ մը շփելու աւելու է :

Գորենի ցեցերուն վրայ առ այժմ, ինչպէս որ ըսինք, այսչափ միայն գրելով ալ յուսանք որ չափաւորապէս գոհ ըրինք հետաքնին և հարցասէր անձին փափաքը . բայց ուրիշ անգամ միտք ունինք գրել նոյն ցեցերուն նաև մասնաւոր բնաւորութեանցը վրայ, և միանգամայն կը ջանանք լուծել նա և ան տարակոյսը թէ արդեօք ան ցեցերուն կամ ցեցոտած ցորենին մարդուս մարմնոյն վրայ եւք ձգելուն պատճառը ինչ կրնայ ըլլալ :



Տ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ընդ որ զործողութենէն մէկը ասկէ հարիւր տարիի չափ առաջ հետեւեալ հանելու կը նստած ըսուած ոտանաւորի վրայ շիներ է, ու երկու հազար ոսկի խոստացեր է ասիկայ լուծողին . ապահովութեան համար ալ թէ ստակը և թէ լուծումը գրած ու կնքած յանձներ է Լոնտոնայի Տէնտայութ անունով դրամատանը . այնպէս որ հանելուկը լուծողը նոյն դրամատունը պիտի գրէ, ու թէ որ շիտակ ելլէ տուած մեկնութիւնը, ստակը իրեն պիտի տրուի : Ըզիտցուիր թէ ինչուան հիմա ասոր մեկնութիւնը տուող մը եղեր է թէ չէ : Մենք հոս ան նուագին ճիշդ թարգմանութիւնը դրենք պարզ գրաբառ՝ գէթ ընթերցողաց զուարճութեանը համար :

- ԵՍ ինձ եմ Որդի, հայր, հաւ և եղբայր,
- Եւ կոյս, և Դայեակ, Ամուսին և Մայր .
- Անարգ եմ, և զիս որոնէ աշխարհ .
- Վիշապ եմ անգութ, Արծիւ, Ծառայ չար :
- Եօթն եմք, և յորժամ լինիմ անձնասպան,
- Չախտս այլոց սրբել ևս եմ բաւական .
- Չիմ ըզկեանս բարձող չիք ՚ի մէջ մարդկան,
- Չի Ծոխ իմ աւարք միշտ ինձ կենանքս տան :
- Հող էի և ջուր, և կեամ ես այլովք .
- Մահկանացու եմ որպէս ամէն ոք .
- Բայց ոչ եմ պատեալ մշտով ոսկերօք :
- Եթէ դու ցանկաս մեծամեծ շահուց,
- Թող զիս ըսպանցէ ոմն ՚ի մեռելոց,
- Եւ եղէց Ծարակ ազգակցաց իմոց :

1 Էօթէ :
2 Լտ. Yponomeuta tritici ըստ Լաթրէյլի : Իս . Falsa tignuola del grano. Գ. Չ. Fausse-teigne.